

**ՁԵՂԶԿԱԾ ԱՆԴԱՄՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐՋ**

Ժամանակակից լեզվաբանության համար հատկանշական է լեզվաբանական հետազոտությունների բազմակողմանիությունը: Կառուցվածքային լեզվաբանությունը, առավելապես եվրոպական կառուցվածքային դպրոցը, չէր անդրադառնում խոսքի, առավել ևս խոսքային իրավիճակի վերլուծության, լեզվական միավորների ձևավորման ու կիրառման պայմաններին: Այն ձգտում էր նկարագրել լեզուն որպես տրամաբանորեն կառուցված մի վերացական համակարգ (6, 267): Բնական է, որ նման պայմաններում թույլ էր հետաքրքրությունը գործաբանության նկատմամբ, մի ոլորտի, որն անմիջականորեն կապված է խոսքային իրադրությունների իրագործման կամ խոսքային գործունեության հետ: Աստիճանաբար առաջացավ հետաքրքրություն դեպի լեզվական միավորների խոսքային համարժեքները: Ծագեց անհրաժեշտություն ավանդական կառուցվածքային շարահյուսությունը համալրել շարահյուսական երևույթների ուսումնասիրության նոր հեռանկարով, որն է գործաբանական շարահյուսությունը: Հենց այստեղ է, որ լեզվաբանական հետազոտության կենտրոնում են գտնվում լեզվական միավորների և հաղորդակցվողների հարաբերությունները, ինչպես նաև լեզվական միավորների կիրառման պայմանները, այսինքն խոսքային գործունեության բաղադրիչները: Ժամանակակից լեզվաբանական տեսություններում գործաբանական մոտեցումների ի հայտ գալը պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզուն սկսել են ուսումնասիրել որպես մարդկանց միջև հաղորդակցման միջոց: Նման պարագայում լեզվաբանների ուշադրության կենտրոնում է հայտնվում լեզվի հաղորդակցական գործառույթը, իսկ շարահյուսությունը դիտվում է որպես վերջինիս իրականացման միջոցներից մեկը:

Ընդհանրապես լեզվաբանական հետազոտությունների շրջանակում ցանկացած երևույթ կառուցվածքային և իմաստաբանական առումներով առավել խորը լուսաբանման է ենթարկվել, քան գործաբանական առումով: Սակայն վերջին ժամանակներս թե՛ ռուս, թե՛ արևմտյան հեղինակների աշխատություններում ավելի ու ավելի հաճախ ենք հանդիպում այս կամ այն երևույթի վերլուծությանը գործաբանության լույսի ներքո: Ձեղչված կառույցները նույնպես

բացառություն չեն վերը նշվածից, այսինքն գործաբանական տեսանկյունից ոչ բավարար ուսումնասիրության են ենթարկվել: Սակայն, համաձայնվելով Ի.Վարդուլի հետ, պետք է նշենք, որ նկարագրական լեզվաբանության ոչ մի տեսություն, որը ձգտում է տալ լեզվի ամբողջական նկարագրումը, չի կարող շրջանցել գեղչման երևույթը (4, 59):

Ինչպես իրավացիորեն նշում է Ռ.Շապիրոն, հաղորդակցական-գործաբանական տեսանկյունից ցանկացած լեզվական միավորի, այդ թվում նաև գեղչված անդամով նախադասությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լեզվական միավորի մասին ստանալ առավել լիարժեք և օբյեկտիվ տեղեկություն ոչ միայն իմաստային կողմի, այլ նաև լեզվում և խոսքում դրանց գործառնման բոլոր օրինաչափությունների մասին (8, 96): Այստեղ հարկ է մեջբերել Փ.Սգալի դրույթն այն մասին, որ «լեզվում չկա մաքուր իմաստաբանություն, դրա իմաստաբանական կառուցվածքը հիմնված է գործաբանության վրա»: Միայն հաղորդակցական-գործաբանական մոտեցումն է հնարավորություն տալիս մինչև վերջ հասկանալ ասույթի և դրա բաղադրիչների բովանդակային կողմը (12, 46):

Ձեղչված անդամով նախադասությունների գործաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը Գ.Գ.Պոչեպցովը հնարավոր է համարում կառուցվածքի ուսումնասիրությունը նախադասության հաղորդակցական հնարավորությունների ուսումնասիրությամբ փոխարինելով: Ասույթը ենթարկվում է ոչ միայն լեզվի կառուցվածքային նորմերին: Այստեղ առաջնային են դառնում հաղորդակցական կարգի նորմերը: Եթե կառուցվածքային օրինաչափությունները ակտիվորեն ուսումնասիրվում են, ապա հաղորդակցական օրինաչափությունները դեռևս գտնվում են եզրագծին: Սակայն, խոսքային շփման ուսումնասիրությունը պահանջում է առավել մեծ ուշադրություն դարձնել ասույթի հենց գործաբանական-հաղորդակցական հայեցակերպին: Տվյալ պարագայում գործաբանական-հաղորդակցական հայեցակերպի առաջնային լինելը բացատրվում է նրանով, որ խոսքի ընթացքում հաղորդակցվողների համար էական չեն այս կամ այն նախադասության քերականական կառուցվածքային հատկանիշները: Սենք ընկալում ենք այդ կառույցները գեղչման ցանկացած աստիճանի դեպքում, նույնիսկ, եթե դրանք բաղկացած են մեկ միավորից: Այսպես, խոսքային շփման կաղապարման համար ընկալելու խնդիրն առավել կարևոր է, քան քերականական կառուցվածքի թերի լինելու խնդիրը: Այս դեպքում նախ և առաջ հետաքրքիր է հաղորդակցման մեջ գեղչված կառույցների կիրառումը և վերջիններիս հաղորդակցական-գործառութային նշանակությունը (7, 9-10): Հաղորդակցական-գործառութային նշա-

նակության մասին խոսելիս պետք է նշել, որ նախադասությունները տարբերվում են նաև հաղորդակցական դիտավորությամբ: Հաղորդակցական դիտավորությունը նախադասության հատկանիշն է՝ ուղղված շփման ընթացքում որոշակի լեզվական գործառույթի իրականացմանը: Հաղորդակցական դիտավորությունը յուրաքանչյուր նախադասության անհրաժեշտ հատկանիշն է. առանց դրա չկա նախադասություն որպես հաղորդակցման միավոր (6, 268-269):

Ձեռնված անդամով նախադասության գործաբանական հաղորդակցական դիտավորության տեսակետից կարևոր է զեղչված անդամով նախադասության նաև առկայական տրոհումը: Նախադասության առկայական տրոհման նպատակը հաղորդակցման տեսակետից նախադասության բաղադրիչների հարաբերակցական կարևորությունն է հայտ բերելն է: Ինչպես հայտնի է, թեման ասույթի այն մասն է, որն արդեն հայտնի է հաղորդակցվող կողմերին և օգտագործվում է որպես հաղորդակցման սկզբնակետ, իսկ ռեման ասույթի այն հատվածն է, որը նոր տեղեկատվություն է պարունակում և հաղորդակցման տեսանկյունից առավել կարևոր է: Միևնույն նախադասությունը կարող է ծեռք բերել տարբեր իմաստներ կախված համատեքստից և այն հաղորդակցական նպատակից, որը հետապնդում է խոսողը: Քերականության տեսակետից նույն նախադասության հաղորդատվական տարբեր հնարավորությունների կիրառումը, ինչպես Արությունովան է նշում, լեզվի տնտեսման մեխանիզմի մասն է (2, 41): Ձեռնված կառույցները հիմնականում բաղկացած են ռեմային միավորներից: Ձեռնված անդամով նախադասություններում ռեման, լինելով ասույթի հաղորդատվական հիմնական մասը, միշտ պահպանվում է, իսկ թեման այն անդամն է, որը զեղչման է ենթարկվում: Թեմայի դերում կարող է հանդես գալ նախորդող կամ հաջորդող ասույթի ցանկացած մաս: Օրինակ՝

1. "And do you like her?" "Very much." (Austen, p. 220)
2. "I shall depend on hearing from you very often, Eliza." "That you certainly shall." (Austen, p.100)
3. "Where is your sister?" said he hastily. "With my mother upstairs." (Austen, p. 233)
4. "Who are you looking at so intensely?" Arabella's mocking voice broke in. "Just my cousin Charles."
"Which one is he?"
"The tall young man with the blue eyes and blond hair. Over there." (High, p. 86)

Լեզվական միավորներն օգտագործվում են ոչ միայն մտքի կազմակերպման, հաստատման, այլ նաև զգացմունքների արտահայտման համար: Անհմար է կառուցել լեզվական համակարգի բավարար նկարագիր առանց մարդկանց զգացմունքները հաշվի առնելու (9, 7): Այս առումով հատկանշական է զեղչված

անդամով նախադասություններում ռեմային միավորների՝ մարդու զգացմունքների արտացոլման միջոց հանդիսանալը: Խոսակցական ոճում ռեման շատ հաճախ արտահայտում է խոսողի սուբյեկտիվ հուզական գնահատողական, եղանակավորող, կամային հարաբերություն կամ վերաբերմունք: Առկայական տրոհման միջոցով հաղորդակցական տեսակետից առավել կարևոր տեղեկատվության ընդգծումը Ռ.Բվերքը համարում է գեղչման պատճառներից մեկը: Խոսքի ընթացքում որոշ տարրեր գեղչելով՝ խոսակիցն ուշադրությունը կենտրոնացնում է իր տեսակետից առավել կարևոր ինֆորմացիայի վրա (11, 538): Նախադասության առկայական տրոհման շնորհիվ է, որ կախված հաղորդակցական համատեքստից միևնույն իրավիճակը կարող է ներկայացվել տարբեր միջոցներով (8, 9-10):

Կարելի է ասել, որ ռեման առավել հաճախ է ձեռք բերում շարահյուսական ինքնուրույնություն և կազմում հուզարտահայտչականություն պարունակող միավորների մի առանձին խումբ (5, 222-223): Օրինակ՝

1. "We are speaking of music, Madam," said he. "*Of music!*" (Austen, p. 118)
2. "They are going in a fortnight." "*Are they indeed?*" cried Elizabeth. (Austen, p. 148)
3. "My husband is finishing his first novel, you see."
Rosemary said: "Oh, *he is?*" (Fitzgerald, p. 74)
4. "Has my brother been giving you an earful?"
"*Should he have been?*" (High, p. 97)
5. "And did you suspect this, too?"
"*How could I have?*" (High, p. 114)

Վերը նշված օրինակներում գեղչված կառույցների կիրառման հիմքում ընկած է ոչ այնքան լեզվի տնտեսման սկզբունքը, որքան խոսակցի՝ դրանց միջոցով տարբեր հուզարտահայտչական երանգներ արտահայտելու պահանջմունքը (զարմանք, վրդովմունք և այլն): Առաջին, երկրորդ և երրորդ օրինակներում գեղչված կառույցներն, անշուշտ, զարմանք են արտահայտում, սակայն եթե առաջին օրինակի մեջ գերիշխող է հեզմական երանգը, երկրորդ և երրորդ օրինակներում խոսակիցն արտահայտում է իր թերահավատությունը լսածի վերաբերյալ, իսկ չորրորդ և հինգերորդ օրինակներում գեղչված կառույցի միջոցով խոսակիցն արտահայտում է իր վրդովմունքը: Այս օրինակներում գեղչված անդամով նախադասությունների գործաբանական իմաստը անմիջականորեն կախված է համատեքստից, ինչպես նաև գեղչված անդամով նախադասության քերականական կառուցվածքից: Սակայն լեզվաբանական համատեքստը գեղչված նախադասությունների գործաբանական վերլուծության առումով միակը չէ: Ընդհանրապես նախադասության, այդ թվում նաև

զեղչված անդամով նախադասության համար մեծ նշանակություն ունի միջանձնային համատեքստը, այսինքն այն համատեքստը, որտեղ իրականացնում է նախադասությունների փոխանակումը խոսողի և լսողի միջև: Այս համատեքստի շրջանակներում հաշվի են առնվում հասցեատիրոջ և հասցեագրողի միջև հարաբերությունները, նրանց կապող խոսքային ակտերի բնույթը, հաղորդակցական նորմերի և պայմանների իրագործումը: Միջանձնային համատեքստի կարևորությունը նախ և առաջ դրսևորվում է նախադասության՝ տեքստի հետ գործաբանական համաձայնեցման հետ, այսինքն արտահայտջականության, ինչպես նաև տնտեսման սկզբունքների հետ (3, 26): Պատահական չէ, որ այս տեսանկյունից զեղչումը բնորոշվում է որպես խոսողի ընտրությունը՝ պայմանավորված իրավիճակի գործաբանական գնահատմամբ (10, 43):

Ինչպես Է.Ռ.Աթայանն է նշում, իրադրական դաշտն ամեն մի առանձին դեպքում դառնում է լեզվախոսքային աշխատանքի ելակետ: Լեզվական տեսակետից ներունակ այդ ոլորտը ենթակա է լեզվական ներկայացման՝ հնարավոր ուղղություններից որևէ մեկով. նրանում եղած ամեն մի կետ կարող է ընտրվել, առանձնացվել ու նշույթավորվել լեզվականորեն: Խոսողների ուշադրության կենտրոնում հայտնվում է այդ ընդհանուր բովանդակության որևէ հատված, որը դառնում է լեզվական մշակման, ասության ձևավորման անմիջական նյութ և դրանով իսկ ներկայացվում իբրև որոշակի իրադրություն: Այնինչ իրադրական դաշտի մնացած մասը մնում է որպես ենթադրվող, բայց լեզվականորեն ոչ բացահայտ գործաբանական միջավայր՝ ետին պլան ու հիմք, առանց որի իրադրությունը կմնար օդում կախված, անըմբռնելի և համարժեքորեն անհաղորդելի մի բան: Այսպես, զեղչված նախադասությունը հանդես է գալիս որպես գործաբանական ֆոնի նշույթավորված մաս: Ասության բառերն ու տարրերը առանձնացնում և շարունակաբար նշույթավորում են տվյալ իրադրության համար սուբյեկտի կողմից իբրև կարևորագույն ընտրվող տարրերակիչ հատկանիշները, որոնք այդ իրադրության սահմաններում կազմում են տարրերակային ենթաիրադրություն: Նախադասության առկայական տրոհումը և տրամաբանական շեշտավորման տեղաշարժը ավարտում են տարրերակիչ ենթահատկանիշների տարրերակման պատկերը՝ բովանդակությունը հասցնելով մասնավորեցման առավելագույն աստիճանի (1, 88-90):

Ձեղչված կառույցների գործաբանական-հաղորդակցական հայեցակերպը զեղչմանն առնչվող կարևոր և հետաքրքիր խնդիրներից է: Ինչպես վերը նշվեց, լեզվի դերը մարդկային պահվածքի հարցում ավելի ու ավելի մեծ ուշադրության է արժանանում հենց գործալեզվաբանական հետազոտությունների շրջանակում: Գործաբանության խնդիրը կապված է խոսքի ընկալման,

կադապարման, զգացմունքների հետ, այսինքն սուբյեկտիվ գործոնի հետ: Լեզվաբանական օրենքների, օրինաչափությունների և կանոնների իմացությունը, խոսքում՝ դրանց գիտակցված կիրառումը նպաստում է խոսակիցների լեզվի գործաբանական արդյունավետությանը: Հաղորդակցման գործաբանական արդյունավետությունը ուղղակի կերպով կախված է զգայական տեքստ կառուցելու կանոններին տիրապետելու արվեստից, որը ենթադրում է զեղչված կառույցներին տիրապետելու արվեստը:

Գրականության ցանկ

1. Աբայան Է.Ռ., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981:
2. Арутюнова Н.Д., Вариации на тему предложения, Инвариантные синтаксические значения и структура предложения, Сборник научных трудов, "Наука", Москва, 1969.
3. Богданов В.В., Контекстуализация предложения, Предложение и текст: семантика, прагматика и синтаксис, Межвузовский сборник, Ленинград, 1988.
4. Вардуль И.Ф., К вопросу о явлениях эллипсиса, Сборник научных трудов, Инвариантные синтаксические значения и структура предложения, "Наука", Москва, 1969.
5. Васильева А.Н., Курс лекции по стилистике русского языка, Москва, 1976.
6. Иванова И.П., Теоретическая грамматика современного английского языка, "Высшая школа", Москва, 1981.
7. Почепцов Г.Г., Коммуникативные аспекты семантики, "Вища школа", Киев, 1987.
8. Шапиро Р.Я., Имена и дескрипции в коммуникативно-прагматическом аспекте, Прагматические и семантические аспекты синтаксиса, Сборник научных трудов, Калинин, 1985.
9. Шаховский В.И., Категоризация эмоций в лексико-семантической системе языка, Изд.-во Воронежского университета, Воронеж, 1987.
10. McCarthy M., Discourse Analysis for Language Teachers, Cambridge University Press, 1991.
11. Quirk R., S.Greenbaum, A Grammar of Contemporary English, Longman Group Ltd, 1972.
12. Sgall P., The Meanings of the Sentence in Its Semantic and Pragmatic Aspects, 1986.

Բնագրային օրինակների աղբյուրներ

1. Austen J., Pride and Prejudice, Wordsworth Editions Limited, 1999.
2. Fitzgerald F.S., Tender is the Night, Penguin Books, 1997.
3. High M.R., The Rock and the Flower, Corgi Books, 1988.